



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Handwritten signature*

«28» 06 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000049

**Ձեռնարկողը՝**

**«Երևաննախագիծ» ՓԲԸ**  
Ք. Երևան, Բուզանդի 1/3

**Գործունեությունը՝**

**Մասիսի տարածաշրջանի (Արարատ-1, Արարատ-2, Արարատ-3) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ուղղմամբ գնահատման հաշվետվություն**  
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000049

<28> 06 2019թ.

**Մասիսի տարածաշրջանի (Արարատ-1, Արարատ-2, Արարատ-3) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝ <<Երևաննախագիծ>> ՓԲԸ  
Ներկայացված նյութեր՝ ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն  
Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրությամբ փաստաթուղթ  
Իրականացման վայրը՝ Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնք, 26 գյուղական համայնքներ

Մասիսի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերում (այսուհետ՝ ՄՄՀՏՊՓ) ներառված են.

«Արարատ-1» - Մասիս քաղաքային համայնքը և Այնթափ, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին, Մարմարաշեն, Ջրահովիտ, Արևաբույր, Նորամարգ, Նորաբաց գյուղական համայնքները,

«Արարատ-2» - Արգավանդ, Գեղանիստ, Գետափնյա, Արբատ, Ազատաշեն, Խաչփար, Ղուկասավան, Դարակերտ, Հայանիստ գյուղական համայնքները,

«Արարատ-3» - Դարբնիկ, Հովտաշատ, Դաշտավան, Ձորակ, Նիզամի, Սայաթ-Նովա, Սիփանիկ, Սիս, Ռանչպար գյուղական համայնքները:

Մասիսի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերլուծությունները կատարվել են նախագծի դրույթներին համապատասխան, հաշվի առնելով ծրագրում ներառված համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը: Արարատի մարզի Մասիս քաղաքային և հարակից գյուղական համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար փաստաթղթում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները և գոյություն ունեցող իրավիճակը, ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Տարածքում առկա էկոլոգիական հիմնախնդիրներ պահանջում են լուծում՝ տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում:

Նախագծվող տարածքը Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանդշաֆտային գոտի է՝ անապատների և մշակովի հողի տեղամասերով, որոնք ձևավորվել



են մարդու հազարամյա ագրոմշակութային գործունեության արդյունքում: Անապատային և կիսաանապատային լանդշաֆտի բնական տեղամասեր մնացել են միայն անջրդի տարածություններում, ոռոգման ջրանցքների շուրջ չմշակվող տարածքներում, արոտավայրերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և ջրաճահճային էկոհամակարգերում:

Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Արարատյան հարթավայրի հյուսիսային մասը, որն ընդգրկում է Ազատ, Հրազդան և Վեդի գետերի ավազանները, հանդիսանում է Հայաստանի հիմնական գյուղատնտեսական շրջանը, որտեղ հողերի աղակալման և ճահճացման պահճառով հարթավայրի ավելի քան քառորդ մասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում: Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառ է հանդիսացել խոնավ աղուտային մարգագետինների առկայությունը: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այպես կոչված “չալաների” հողեր: Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

Մասիսի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 17987.11 հա տարածք, որտեղ ներառված բնակավայրերում բնակչության թիվը կազմում է 90577 մարդ: Ծրագրի իրականացման տարածքներում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ, գեղատեսիլ, տեսարժան վայրեր, որոնք նպաստավոր են զբոսաշրջության զարգացման համար: Ներկա իրավիճակում տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են՝ հողագործությունը, այգեգործությունը, բուսաբուծությունը, անասնապահությունը, ձկնաբուծությունը և առևտուրը:

Ծրագրում ընդգրկված Մասիսի տարածաշրջանի համայնքների սոցիալական միջավայրի և շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն՝ արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն՝ արտադրական հոսքաջրերով և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը՝ կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը,
- անտառի անկանոն օգտագործումը, ինչը էներգետիկ ճգնաժամի տարիներին հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող բնական գործոններից են սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Ներկայումս Ծրագրի ազդեցության ենթակա համայնքներում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Արարատի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ ներառված համայնքներում արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Մասիս քաղաքում (Արարատ-1): Մասիս քաղաքում գործում են ոսկու արդյունահանման ֆաբրիկա, գինու և կոնյակի գործարան, 2 հատ ծխախոտի արտադրություն և մի շարք փոքր ձեռնարկություններ, որոնք ներկայումս գործում են պլանային արտադրողականության՝ 5-10%-ի սահմաններում: Արդյունաբերական



արտանետումները զգալի չեն, հիմնականում ներառում են ոսկու կորզման գործարանից և շահագործվող ավազի և քարի հանքավայրերից արտանետումները: Արդյունաբերական արտանետումները բոլոր աղբյուրներից ընդհանուր հաշվարկվել են 218.6 տ/տարի, որից Մասիս քաղաքում կազմում է 107.03 տ/տարի, իսկ մնացած 26 համայնքներում գումարային՝ 111.57 տ/տարի: Մթնոլորտ արտանետումների 93.9%-ը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին: Համայնքներում ֆոնային աղտոտվածության մակարդակն աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ):

Տարածքի համալիր գնահատականը վերլուծվել է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ: Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին, Մասիսի տարածաշրջանի համայնքների համար կազմում է 17987.11հա, տարածքի համալիր գնահատականը համարվում է բարենպաստ:

Հեռանկարում, բոլոր ձեռնարկությունների համար նախատեսված արտադրողականության աճի դեպքում տարածքի համալիր գնահատականը ևս կլինի բարենպաստ: Ծրագիրը լրացուցիչ միջոցառումներ չի նախատեսում արտանետումների նվազեցման համար: Ոսկու կորզման գործարանի տարածքում կարևորվում է օդի և հողերի որակական ցուցանիշների մոնիտորինգի իրականացումը, ինչը թույլ կտա գնահատել, ժամանակին ահազանգել խախտումների մասին և ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ:

Մասիսի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծերում ընդգրկված համայնքները ներառված են Հրազդան, Արարատյան ջրավազանային կառավարման տարածքներում, որի մեջ մտնում են՝ Վեդի, Ազատ և Հրազդան գետերի ավազանները: Ներկայումս գետերի աղտոտվածության հիմնական պատճառ է հանդիսանում ՄՄՀՏՊՓ ընդգրկված բնակավայրերի տնտեսակենցաղային հոսքաջրերը, որոնք առանց մաքրվելու թափվում են գետավազանների մեջ՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: Վերջին տարիներին Հրազդան գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում, զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը: Համաձայն գետերում ջրի որակի աղտոտվածության մակարդակի գնահատման ցուցանիշների, ներկա պայմաններում ՄՄՀՏՊՓ ներառված բնակավայրերի սահմաններում բացառվում է գետերի օգտագործումը ռեկրեակցիոն նպատակով:

Ծրագիրը նախատեսում է Մասիսի տարածաշրջանի համայնքների համար հեռանկարում կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ: Պայմանավորված գյուղերի աշխարհագրական դիրքերով, մաքրման կայաններ նախատեսվում է տեղադրել՝ Մարմարաշեն, Արբատ, Գետափնյա, Հայանիստ, Խաչփար, Դարբնիկ, Հովթաշատ, Սայաթ-Նովա, Սիփանիկ, Սիս համայնքներում: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան. ինչը կապահովի 98% մաքրման արդյունավետություն և կունենա բազմաստիճանային մաքրման կառուցվածք, սեպտիկ կույտ, անաերոբ կենսաբանական ռեակտոր, պարզարան, և այլ կառույցներ:

ՄՄՀՏՊՓ ներառված Մասիս քաղաքային և 26 գյուղական համայնքները ներառում են 16929.02 հա հողեր: Պահուստային հողերը Մասիսի տարածաշրջանում բացակայում են: Նախագծով նախատեսված հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի գործառական նշանակության փոփոխությունները ներառում են.





	առկա	հեռանկար
Գյուղատնտեսական նշանակության	9942.07 հա	9421.95 հա
Բնակավայրերի	3808.14 հա	4135.32 հա
Արդյունաբերական, ընդերքօգտագործման	865.41 հա	904.6 հա
Էներգետիկայի և տրանսպորտի	322.74 հա	421.58 հա
Հատուկ պահպանվող տարածքներ /պատմական և մշակութային հողեր/	101.20 հա	32.95 հա
Անտառային հողեր	0,8հա	0,29 հա
Ջրային	1561.44 հա	1690.26 հա
Չմշակվող հողեր	2201.46 հա	1663,58հա
Արոտավայրեր	1258.95 հա	1239.30 հա
Գերեզմանատներ	66.25 հա	59.02 հա
Խոտհարքեր	357.31 հա	373.68 հա

Ծրագրում ընդգրկված Դարակերտ գյուղական համայնքի հողային հաշվեկշռում իրականացվել է անտառային հողերի կատեգորիայի փոփոխություն, որի համար հիմք է հանդիսացել «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» կողմից 19.03.2018թ. տրված թիվ 55 եզրակացությունը, որով համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության՝ 0.51445 հա հողերը փոխադրվելու է գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի:

Հողերի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝

- ավտոտրանսպորտի, արդյունադերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները;
- արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Համայնքների տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով, հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար: Ծրագրով նախատեսված նոր արդյունաբերական ձեռնարկությունների և հասարակական շինությունների կառուցումը և գործարկումը չեն հանգեցնի հողի դեգրադացման և աղտոտման: Մթնոլորտ արտանետվող փոշին իր մեջ չի պարունակի ծանր մետաղների տարրեր, հողն աղտոտող բաղադրիչների կոնցետրացիաները չեն գերազանցի սահմանային-թույլատրելի նորմերը: Հեռանկարային ժամանակահատվածում նախատեսված է վերականգնել Մասիսի տարածաշրջանում շահագործված և շահագործվող օգտակար հանածոների հանքավայրերի խախտված տարածքները /ընդհանուր՝ 9.02 հա մակերեսով/: Ռեկուլտիվացման/վերականգնման աշխատանքները կներառեն երկու փուլեր՝ կենսաբանական և տեխնիկական: Կենսաբանական եղանակը կկիրառվի այն գրունտերի համար, որտեղ էրոզիան կանխարգելելու նպատակով անհրաժեշտ կլինի ստեղծել բուսական շերտ:





Հողի աղտոտման կանխարգելման և էոզոլայից պահպանման միջոցառումների շարքին է դասվում նաև համայնքային տարածքների կանաչապատումը, թափոնների կառավարումը և այլն:

Ծրագրում ընդգրկված Մասիս քաղաքային և 26 գյուղական համայնքներում առաջացացող կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) ընդհանուր տարեկան քանակը ներկա իրավիճակում /90577 բնակչության թվի համար/ կազմում է 18115,4 տ/տարի: Հեռանկարում Մասիսի տարածաշրջանի համայնքներում բնակչության թիվը կկազմի 99635մարդ, կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) ընդհանուր քանակը՝ 19927 տ/տարի: Արդյունաբերական թափոնները հիմնականում ենթակա են երկրորդական օգտագործման: Ոչ օգտագործելի թափոնների քանակը կկազմի՝ 39,56 տ/տարի, որը սահմանված կարգով կտեղադրվի համապատասխան աղբավայրում: Ծրագրի իրականացման տարածքում օրգանական ծագման թափոնների /ոչ վարակիչ և վարակիչ/ ընդհանուր քանակը գնահատվել է 18,7 կգ/օր, որոնք վնասագործման նպատակող հանձնվելու են լիցենզավորված կազակերպությունների:

ՄՄՀՏՊՓ ներառված բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 945,921 հա մակերես, իսկ համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը կազմում է 4: Տարածաշրջանի բոլոր բնակավայրերը օգտվում են Մասիսի աղբավայրից, որը ժամանակին չի ծածկվում հողի շերտով, ենթարկվում է հնքնայրման, տարածաշրջանում ստեղծելով հակասանիտարական վիճակ: Հեռանկարում, աղբահանության խնդրի լուծման համար առաջարկվել է փուլային եղանակ: Աղբահանության կենտրոնական վայրը /Մասիս քաղաք/ պետք է փոխարինվի մի քանի առանձին աղբավայրերով: Նոր աղբավայրերը տեղակայվելու են Մասիս քաղաքի և Այնթապ, Մարմարաշեն, Հայանիստ, Դարբնիկ, Նիզամի համայնքների վարչական սահմաններում: Մարմարաշեն բնակավայրում նախատեսվում է աղբավերամշակման գործարանի կառուցում: Գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները նախագծով նախատեսված է պարսպապատել և բարեկարգել, աղբահանությունը կատարել կազմակերպված ձևով՝ մինչև աղբավերամշակման գործարանի նախագծումը և կառուցումը:

Մասիսի տարածաշրջանի համայնքներում, մոտ 42 հա տարածքներում առկա են 28 գերեզմանոցներ, որոնք գործող են: Մասիս քաղաքում ներկայումս գործում է 2 գերեզմանոց, որոնց համար սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ: Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախագծով նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում, իսկ գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում՝ տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Ներկա դրությամբ Արարատի տարածաշրջանի համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (գրոսայգիներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 15 հա /որից գյուղական համայնքներում՝ 13հա/, իսկ սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կազմում է 8120,8 հա: Հեռանկարում սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 8932,88 հա, իսկ իսկ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները՝ 114.353 հա, գյուղական համայնքներում հեռանկարում մակերեսը հասցնելով 12 մ<sup>2</sup>/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ<sup>2</sup>/մարդ:

Մասիսի տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղին բացակայում է: Գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր հեղեղումներից



պաշտպանելու նպատակով բոլոր համայնքերի համար նախագծով առաջարկվում է հեղեղատար առուների նախագծում և կառուցում, հաշվի առնելով տարվա ընթացքում անձրևաջրերի քանակը /տեղումների տարեկան քանակը կազմում է 252 մմ, բնակավայրերի տարածքի մակերեսը՝ 945.916 հա/:

ՇՄԱՌԳ հաշվետվությունում վերլուծվել է նաև Մասիսի տարածաշրջանի (Արարատ-1, Արարատ-2, Արարատ-3) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող բնածին վտանգները /կարկուտ, քամի, հեղեղ, սելավ/:

Համայնքների տարածքային զարգացման համար առաջնահերթ ընտրվել են այնպիսի ուղղություններ, որոնց համար ներդրումները նպաստավոր կլինեն տարբեր ոլորտների զարգացման համար և կխթանեն.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածի, ճանապարհային ցանցի և սոցիալ- կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը:
- Մասիս քաղաքային և գյուղական համայնքների Մ2 և միջպետական հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգմանը, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայմանը և կազմակերպմանը,

Տարածաշրջանում, նախագծային ժամանակաշրջանում շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական իրավիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար ծրագրով նախատեսված առաջնահերթ և հեռանկարային միջոցառումների շարքում ներառված են.

- ճահճացած տարածքների չորացումը և բարելավումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների վերականգնումը/ռեկուլտիվացիան,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- կոյուղու համակարգերի բարելավումը,
- համայնքներում ոռոգման ցանցի արդիականացումը և բարելավումը,
- սանիտարական գոտիների պահպանմամբ աղբավայրերի նախատեսումը,
- անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցումը,
- գետեր թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի համար կենսաբանական մաքրման կայանի կառուցումը,
- տարածաշրջանում մսի վերամշակման արտադրամասի կազմակերպումը (սպանդանոցի կառուցում), շարժական ջերմային սարքերի ներդրման օրգանական թափոնների վնասազերծումը
- համայնքների տարածքներում աղբահանման կետերի կազմակերպումը, ժամանակակից պահանջներին համապատասխան աղբավերամշակման գործարանի կառուցումը,
- ճանապարհի եզրերին, հանգստի գոտիներում կանաչապատման իրականացումը,



- մեքենաների տեխնիկական վիճակի վերահսկողության սահմանումը ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման նպատակով:

**Փորձաքննական եզրահանգումներ.** Արարատի մարզի Մասիս քաղաքի և հարակից գյուղական համայնքների տարածքային քաղաքաշինական լուծումների առաջարկման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱՌԳ հաշվետվությունը լրամշակվել է: Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է գնահատման և փորձաքննական գործընթացներին:

**Փորձաքննական պահանջ**

Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

<<Երևաննախագիծ>> ՓԲԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի (Արարատ-1, Արարատ-2, Արարատ-3) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՏՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Հ. Մկրտչյան